ԳՐԱԴԱՐԱՆԸ

# ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

## Հատոր 1

¾¸ÆÅ ³ß³ÆÛÏ
[illegible]

ºñ¨³Ý 2013

ՀՏԴ 891.981 Շիրվանզադե
ԳՄԴ 84Հ
Շ 661

Կազմեց և խմբագրեց Նվեր Վիրաբյանը

Ալեքսանդր Շիրվանզադե

Շ 661 [Ստեղծագործությունների ժողովածու]/ Ալ. Շիրվանզադե.- Եր.: Էդիթ Պրինտ, 2013.-484 էջ.- (Իմ գրադարանը)

Ալեքսանդր Շիրվանզադեի այս ժողովածուն լույս է տեսել «Իմ գրադարանը» մատենաշարով: Ներառում է հեղինակի՝ ՀՀ հանրակրթական դպրոցի և բուհական ընդունելության քննությունների ծրագրերով նախատեսված ստեղծագործությունները և լրացուցիչ ընթերցանության նյութեր:

Գիրքը հասցեագրված է ոչ միայն մեր դպրոցականներին, այլև աշխարհասփյուռ հայ պատանիներին ու պարմանուհիներին, ինչպես նաև մեծահասակ ընթերցողներին, բոլոր նրանց, ովքեր չեն կորցրել իրենց հետաքրքրությունը հայ բազմադարյան գրականության նկատմամբ:

ՀՏԴ 891.981 Շիրվանզադե
ԳՄԴ 84Հ

ISBN 978-9939-52-647-8

© «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2013

# ՆԱԽԱԲԱՆ

## Ալեքսանդր Շիրվանզադե

Հայ գրող, դրամատուրգ, ժողովրդական գրող, Անդրկովկասի կուլտուրայի վաստակավոր գործիչ:

Շիրվանզադեի լավագույն երկերի մեծ մասը ստեղծվել է 1890-ական թ. և 1905 թ. հեղափոխության նախօրեին, հասարակական-քաղաքական վերելքի տարիներին:

Շիրվանզադեն մեծ հոգեբան է: Իր լավագույն երկերում, այդ թվում և «Քաոս»-ում քննել է մարդկային ողբերգության պատճառներն ու ակունքները, տեսել հոգեբանական բարդ երևույթների արտաքին ազդակները, մասնավորապես սոցիալական հիմքերը:

Շիրվանզադեն օժտված է կերպավորման և տիպականացման մեծ տաղանդով, հասարակական կյանքը ամբողջությամբ պատկերելու ձիրքով:

Շիրվանզադեի ստեղծագործությունն ունի թեմատիկ, կենսական և ժանրային լայն ընդգրկումներ ու բազմազանություն: Նա պատկերել է բոլոր խավերի ներկայացուցիչներին, բարձրացրել է սոցիալական, քաղաքական, բարոյական հարցեր, անդրադարձել ժողովրդի ծանր վիճակին, մեծ քաղաքի կոնֆլիկտներին, կնոջ ազատագրման խնդրին, ազգային ողբերգությանը և այլն:

Շիրվանզադեն բացառիկ դեր է խաղացել հայ դրամատուրգիայի և թատրոնի պատմության մեջ:

Մեծ են Շիրվանզադեի ծառայությունները նաև գեղարվեստական ու բեմական լեզվի զարգացման գործում:

Շիրվանզադեի լավագույն երկերը թարգմանվել են նախկին ԽՍՀՄ ժողովուրդների և աշխարհի շատ լեզուներով:

# ՔԱՈՍ

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

### I

Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր:

Յոթ օր առաջ նա իր նոր կառուցվող տասնումեկերորդ տան վրա արհեստավորներին պատվերներ տալիս մարմնի մեջ զգաց անսովոր ցուրտ, եկավ տուն, պառկեց անկողին և այլևս չկարողացավ վեր կենալ: Բժիշկները մարդուն ուշադիր քննեցին և միաձայն հաստատեցին թոքերի բորբոքում:

Լուրը նույն ժամին տարածվեց ամբողջ քաղաքում: Ո՞վ չէր ճանաչում կալվածատեր և հանքատեր Մարկոս Ալիմյանին - այդ վաթսունհինգ տարեկան, կլորիկ մարմնով, ուռած թշերով, եռանդուն ու աշխույժ ծերունուն և չէր լսել նրա բազմավաստակ կյանքի խրատական պատմությունը: Ուղիղ հիսուն տարի առաջ, թողնելով իր աննշան ծննդավայրը, եկել, հաստատվել էր այն փոքրիկ, աննշան ծովեզրյա քաղաքը, որին վիճակված էր մոտիկ ապագայում ստանալ համաշխարհային հռչակ իր ստորերկրյա գանձերի շնորհիվ:

Այժմ տասնուիններորդ դարի վերջին քառորդում նրա մասին կազմվել էին կատարյալ առասպելներ: Պատմում էին, որ նրա հոյակապ տան ներքնահարկում կա մի առանձին սենյակ՝ մթին ու սառն ինչպես շիրիմ: Ոչ մի հողեղեն էակ նրա երկաթե դռներով ներս չի մտել: Այնտեղ են դարսված Մարկոս Ալիմյանի ոսկիներով լի տոպրակները: Ասում էին, որ ամեն գիշեր մռայլ ծերունին մեն- մենակ, երկայն թավիշե

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....................................................................3

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ.....................................................4

ՔԱՈՍ............................................................................7